ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

« »----------2010թ N --------Ա

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ՀԵՂՆԱՐ ԴԵՐԵՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՏԱԹԵՎԻԿ ԱՐՄԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23–ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 983-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Առանց ծնողական խնամքի մնացած Հեղնար Դերենիկի Գրիգորյանին /ծնված 1991 թվականի փետրվարի 3-ին, հաշվառված ք. Երևան, Հարավ–Արևմտյան Բ-2 թաղամաս, հ.138 շենք, հ.27 բնակարան, անձնագիր ԱՀ 0638800, տրված 31.07.2008թ; 008–ի կողմից/ և Տաթևիկ Արմենի Վարդանյանին /ծնված 1991 թվականի հունիսի 15-ին, հաշվառված ք. Երևան, Զորավար Անդրանիկի փողոց, հ.10 շենք, հ.4 բնակարան, անձնագիր ԱՀ 0331390, տրված 20.07.2007թ; 008–ի կողմից/ վերցնել հաշվառման, որպես բնակարանի կարիք ունեցող անձինք։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տեղեկանք

Առանց ծնողական խնամքի մնացած Տաթևիկ Արմենի Վարդանյանին և Հեղնար Դերենիկի Գրիգորյանին, որպես բնակարանի կարիք ունեցող անձանց հաշվառման վերցնելու մասին Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Երևան քաղաքի ավագանու նշված որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Տեղեկանք

Առանց ծնողական խնամքի մնացած Տաթևիկ Արմենի Վարդանյանին որպես բնակարանի կարիք ունեցող անձ հաշվառման վերցնելու մասին Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

Երևան քաղաքի ավագանու նշված որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների, ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հեղնար Գրիգորյանը /հաշվառված Հարավ-Արևմտյան Բ2 թաղամաս, հ.198շ. հ.27 բնակարանում/ 2008թ. նոյեմբերի 5-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վերցվել է կենտրոնացված հաշվառման որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա /հաշվառման համարն է 1621/։ Հ. Գրիգորյանը 2010թ. փետրվարի 18-ին դիմել է Երևանի քաղաքապետարան՝ ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 23-ի հ. 983-ն որոշման համաձայն, որպես բնակարանի կարիք ունեցող անձ, հաշվառման վերցնելու խնդրանքով։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից քաղ. Հեղնար Դերենիկի Գրիգորյանին տրվել է 16.04.2009թ. հ. ՎԴ-2/1608 տեղեկանքն այն մասին, որ նրա անվամբ ՀՀ տարածքում վերջին 5 տարվա ընթացքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

Տաթևիկ Վարդանյանը /հաշվառված Զորավար Անդրանիկի փողոց, հ.10շ. հ.4 բն. հասցեում/, որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա, կենտրոնացված հաշվառման է վերցվել 2004թ. մարտի 11-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից /հաշվառման համար 95/։

Տ. Վարդանյանը 2010թ. փետրվարի 19-ին դիմել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին՝ ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 23-ի հ. 983-ն որոշման համաձայն, որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա, բնակարանի հաշվառման վերցնելու խնդրանքով։ Հետագա ընթացքի համար դիմումն ուղարկվել է Երևանի քաղաքապետարան։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից քաղ. Տաթևիկ Արմենի Վարդանյանին տրվել է 01.04.2009թ. հ.ՎԴ-2/1393 տեղեկանքն այն մասին որ նրա անվամբ ՀՀ տարածքում վերջին 5 տարվա ընթացքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք *չունեն սեփականություն կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն*

և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 23.07.2003թ. հ.983-Ն որոշմամբ բնակարանի կարիք ունեցող նշված անձինք հաշվառման վերցնելու մասին դիմումը ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմին, որտեղ հաշվառման վերցնելու մասին դիմումները նրանց բնակարանային պայմանների ուսումնասիրության ակտի և մյուս անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին մեկամսյա ժամկետում քննության են առնվում համայնքի ավագանու նիստում և հաշվառման վերցվում համայնքի ավագանու որոշմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ